ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԳԼԱՁՈՐ
ՄԱՐԶ	ՎԱՅՈՑ ՁՈՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլաձոր համայնքը կազմավորվել է <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքում 2017 թվականի հունիսի 9-ին կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափ, Գլաձոր և Վերնաշեն գյուղական համայնքների միավորումից:
Համայնքի կենտրոնը Գլաձոր գյուղն է:

Գլաձոր համայնքի կազմում ընդգրկված Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերը հիմադրվել են 1828-1830 թվականներին: Ներկայիս բնակիչները ներգաղթել են ռուս-պարսկական պատերազմի տարիներին, Պարսկահայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից:
Համայնքի շրջակայքում պահպանվել են Պռոշյան իշխանների բերդի պարսպի մեծ մասը, խաչքարեր, գերեզմանատներ:
Համայնքի տարածքում է գտնվում <<Սպիտակավոր>> պատմամշակութային հուշարձանը, <<Սուրբ Հակոբ>> եկեղեցին, չորս մատուռներ, Թանահատի վանքը, որտեղ 13-րդ դարում գործել է Գլաձորի համալսարանը:
<<Սպիտակավորը>> կառուցվել է XII-րդ դարում Պռոշյանների կողմից: 20-րդ դարի 80-ական թվականներին հուշարձանի տարածքում է ամփոփվել հայ պետական, ռազմական գործիչ, քաղաքագետ և իմաստասեր Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը, որն այնտեղ է հասել նրա եղբոր և մի խումբ նվիրյալների ջանքերով, հաշվի առնելով զորավարի ցանկությունը:
<<Սուրբ Հակոբ>> եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում, որը մարզի գործող եղեկեցիներից է: 2010-2011 թվականին եկեղեցին վերանորոգվել է:
Գլաձորի համալսարանը եղել է Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնական կաճառ: Որպես համալսարան ձեռագրերում հիշատակվում է 1291թ-ից: Հիմնադրվել է Թանադե վանքում՝ Խաղբակյան Պռոշ իշխանի նախաձեռնությամբ և Օրբելյան իշխանական տան ու Սյունաց մետրոպոլիտության աջակցությամբ: Գոյատևել է մինչև 1340-ական թվականները:
Համայնքի բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գլաձոր համայնքը գտնվում է Վայոց ձորի մարզի հյուսիս-արևելք հատվածում, մարզկենտրոնից 3 կմ հեռավորության վրա: Մայրաքաղաք Երևանից ունի 120 կմ. հեռավորություն, ծովի մակարդակից՝ 1350 մ. բարձրություն: Կլիման մերձարևադարձային է, չոր, ցամաքային: Ամռանը շոգ է, ձմռանը՝ ցուրտ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	350
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-11
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+34

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1) Գլաձոր	
1.2) Գետափ	5 կմ
1.3) Վերնաշեն	2 կմ

2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Գլաձոր	
3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	123	
3.2) մարզկենտրոնից (կմ)	3	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	10	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	3	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	3	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	63	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1360	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	131.3354	13133.54
6.Սահմանակից համայնքների անվանումները	Եղեգնաձոր, Եղեգիս, Մալիշկա	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	gladzor.vayotsdzor@mta.gov.am gladzor.gladzor@mail.ru	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	gladzorhamajnq.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093-00-91-09	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	2-34-46,2-22-80	
11.Համայնքի հեռախոսային կոդը	0281	
12.Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	Այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	3607	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Ոչ	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Այո	

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	6215
2. Գրանցված ծնունդների քանակը	71
2.Մահացության դեպքերի քանակը	30
3.Ամուսնությունների քանակը	36
4. Ամուսնալուծությունների քանակը	2
5. Տնային տնտեսությունների թիվը	1221
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	164
7. Կենսաթոշակառուների քանակը	865
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	393

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	3
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	3
5. Հանրակրթական դպրոցների քանակը	3
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	164958,2
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	8
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1411

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	13133.54
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	12098.31
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	463.35
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1216
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	1164
7. Խոզերի գլխաքանակը	391
8. Գյուղատնտեսական տեխնիկա	14
8.1 տրակտորներ (քանակը)	14
8.2 կոմբայններ (քանակը)	0
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1221

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	19
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	180.9

6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	85
6.2 Էքսկավատորների քանակը	6
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	7
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	196259.9	184871.3
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	27000	22413.7
2.1 հողի հարկ	7500	5657.4
2.2 գույքահարկ	19500	16756.3
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	133327.7	133327.7
3.1 դոտացիա	120655.7	120655.7
3.2 սուբվենցիա	12672	12672
4. Մուտքեր հողի օտարումից	6000	6148.7
5.Այլ եկամուտներ	29932.2	22981.2

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	152361	128824.8

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	25824.2	25972.9

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1. Ընդամենը ծախսեր	50365	35908.7

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	26 11
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	53922.7
3. Ավագանու անդամների թվաքանակը	11

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	**Ակնկալվող լուծումը**
Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում /խճապատում/	Խնդրի լուծման նպատակով՝ 2019 թվականին ներկայացվել է պետական բյուջեից կապիտալ սուբվենցիա ստանալու հայտ